

ԱՆՅՐԱԾԵՇՏ, ՈՒՍԱՆԵԼԻ, ՕԳՏԱԿԱՐ ՈՒ ՀԵՏԱՔՐԵՐ

Արտակարգ Վերջ

«Արտակարգ Վերջ» լրատվական հասարակական կազմակերպություն

URL: <http://www.emergency.am>, E-mail: tert@emergency.am

ԹԵՐԿԹ



Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ

N 48 (225)

28.12.07-3.1.08
Շաբաթաթերթ

Քրոնիկոն
էջ 2, 3

Միջազգային
էջ 2

Սուրբ Նիկողայոսից մինչեւ
Սանտա Կլաուս
էջ 5

Ամանոր,
Սուրբ Ծնունդ
էջ 6

Թող կրկին
դողանջեն
զանգերը
էջ 6

Առաջին ամա-
նորյա բացիկը
էջ 7

Արտակարգ
զվարճալի
իրավիճակներ
էջ 7

Արտակարգ
ժամանց
էջ 8

Գինը 100 դրամ

Արտակարգ շնորհավորանք

Ասես մաշված մի պատեֆոն,
ասես հազար անգամ լսված,
անընդհատ ասված ու կրկնված
մի ձայնագրություն, սել-սպիտակ
մաշված ժապավենի թռթռացող,
ահավոր ծանոթ պատկերի տակ
գրված տիտրերի պես
Նորից պիտի հուզումնաթաթափ
արտաբերենք՝ պատմության
գիրկն անցավ 2007
թվականը (Աստված ջան, էսքան
տարին էսքան արագ ոնց
անցավ) եւ անմիջապես սկսվեց
հերթական՝ 2008 թվականը:

Տեսես ի՞նչ հրաշքներ ունի
այս տարին մեզ համար պահած,
ի՞նչ իղձ ու ցանկություն
կկատարվեն, որտե՞ղ
կսայթաքենք, որտե՞ղ
կսավառնենք, տարին
հաջո՞ղ կլինի, բերքաբե՞ր,
թե՞ կարկտաշատ: Ամեն տարի
հայացքներս սպասումներով
Նոր տարվան հառած
երեխա-երեխա սպասել ենք,
թե հեռուներից ով է մեզ
կռած բախտ ու երջանկություն
բերելու, մեր Ներսի Արարչին
անընդհատ ցցի հանած՝
աչքներս խալխի բիծեքի
մեջուկներին ենք պահել:

1-01, 1-12

**Նոր տարի լինի, թե՛ հին,
ձմեռ լինի, թե՛ ամառ,
գիշեր լինի, թե՛ ցերեկ,
մենք միշտ դասրաս ենք
ձեզ օգնության հասնելու:**

Հայաստանի փրկարար ծառայություն

4-Ո՛՛՛ ՆԳ

Թունավորվել են շուրջ գազից

Դեկտեմբերի 20-ին Երեւանի Ղափանցյան փողոցի 6 շենքի բնակիչներից ահազանգ է ստացվել, որ նույն շենքի 26-րդ բնակարանի բնակիչները տեւական ժամանակ տնից դուրս չեն եկել ու չեն պատասխանում հեռախոսի եւ դռան գանգերին:

Դեպքի վայր մեկնած փրկարարները բացել են բնակարանի դուռը, որտեղ անգիտակից վիճակում հայտնաբերել են Թորոս Մկրտչյանին եւ Վարդան Վարդանյանին: Տուժածները տեղափոխվել են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Ավելի ուշ հիվանդանոցից տեղեկացվել է, որ տուժածները թունավորվել են շուրջ գազից եւ նրանց առողջական վիճակը ծանր է:

Չայնաբերվել է դիակ

Դեկտեմբերի 21-ին Վանաձորի բնակիչ Մարտիրոսյանից ահազանգ է ստացվել, որ Տիգրան Մեծի պողոտայի 11/11 տանը բնակվող իր եղբայրը չի պատասխանում դռան եւ հեռախոսի գանգերին:

Դեպքի վայր մեկնած փրկարարները բնակարանում հայտնաբերել են 1952 թ.

ծնված Վանուշ Մարտիրոսյանի դին:

Ծխահեղձված դի

Դեկտեմբերի 21-ին 1-03 ծառայությանից տեղեկություն է ստացվել, որ Գյումրիի Զեխովի փողոցի 141/190 տնակում հայտնաբերվել է 30-ամյա Արմեն Աթոյանի ծխահեղձ դին:

Գործող վիճակում



Դեկտեմբերի 21-ին Վանաձորի բնակիչ Քոչարյանից ահազանգ է ստացվել, որ Երեւանյան խճուղու 105/50 տան բնակիչները չեն պատասխանում դռան եւ հեռախոսի գանգերին:

Դեպքի վայր մեկնած փրկարարները նշված հասցեում հայտնաբերել են 1924

թ. ծնված Գեորգ Բալայանի եւ 1930 թ. ծնված Ժենյա Սարոյանի դիերը, ինչպես նաեւ ինքնաշեն գազօջախ՝ գործող վիճակում:

Ընկել է բենզինի սարայի մեջ

Դեկտեմբերի 24-ին, ժամը 21.55-ին, ահազանգ է ստացվել, որ Երեւանի Շարուրի փողոցի 25 հասցեում՝ «Պապոյան Քրիստինե» ՍՊԸ-ի տարածքում բենզինի տարայի մեջ մարդ է ընկել, որին հանելու համար անհրաժեշտ է օգնություն:

Հիմնարկության պահակ, 1985 թ. ծնված Սամվել Դանիելյանին 60 տոննա տարողությամբ տարայից հանելու նպատակով տարայի մեջ է մտել թիվ 4 հրշեջ-փրկարարական ջրկատի հրշեջ-փրկարար, փրկարար ծառայության սերժանտ, 1976 թ. ծնված Տիգրան Խաչատրյանը:

Դուրս գալու պահին ԹՄՅ-8 շնչառական ապարատն ընկել է Տ. Խաչատրյանի վրայից, ինչի հետևանքով նա բենզինի գոլորշիներից թունավորվել է եւ չի կարողացել դուրս գալ տարայից:

Օգնության եկած փրկարարները տարայից դուրս են բերել անգիտակից վիճակում գտնվող Տ. Խաչատրյանին եւ Ս. Դանիելյանին, որոնց տեղում ցույց են

տվել առաջին բուժօգնություն եւ շտապօգնության ավտոմեքենաներով տեղափոխել «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Դեկտեմբերի 25-ի առավոտյան հրշեջ-փրկարար Տ. Խաչատրյանը դուրս է գրվել հիվանդանոցից, իսկ Ս. Դանիելյանը դեռ անգիտակից վիճակում է:

Ավստրալիացի

Դեկտեմբերի 26-ին ահազանգ է ստացվել, որ ժամը 22.40-ի սահմաններում, Արարատի մարզի Մասիսի մերձակայքում, դեռելս չչարգված հանգամանքներում, «ԶԻԼ» մակնիշի 577 ՍԼ 67 պետհամարանիշով բեռնատար ավտոմեքենան դուրս է եկել երթուղուց մասից եւ շրջվել, իսկ վարորդին ավտոմեքենայից դուրս են բերել այդ պահին դեպքի վայրում գտնվող մարդիկ, եւ տուժածին հիվանդանոց տեղափոխելու համար անհրաժեշտ է շտապօգնության բրիգադ:

Դեպքի վայր մեկնած շտապօգնության աշխատակիցներն ավտոմեքենայի վարորդ, 1964 թ. ծնված Անդրանիկ Ազնավուրյանին տեղափոխվել են Երեւանի «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը ծանր է:



Երկու գյուղ դարձել է միլիոնատեր

Սուրբ Ծննդի նախօրեին Իսպանիայի երկու գյուղերի երջանիկ բնակիչները վիճակախաղով շահել են 270 միլիոն եվրո: Հաջողակ տոմսերը ծեռք էին բերել եւ բաժանել գյուղերի բնակիչներին երկու տեղական կազմակերպություններ:



Երկրի հյուսիս-արեւմուտքում գտնվող Կանես եւ Մոլեդո փոքրիկ գյուղերի անուներն այժմ հայտնի են ամբողջ Իսպանիայում: Տարեմուտը հատկապես հաջող էր Մոլեդոյի համար: «Ֆիեստաս» հասարակական կազմակերպության գնած տոմսերը շահել են 219 միլիոն եվրո այն դեպքում, երբ Մոլեդոն ունի ընդամենը 45 բնակիչ:

Ամբողջ աշխարհում իսպանացիները հայտնի են որպես վիճակախաղերի սիրահարներ: Այս տարի Սուրբ Ծննդի նախօրեին իսպանացիները մոտ երեք միլիարդ եվրոյի վիճակախաղերի տոմսեր են գնել:

Սեր 2008

Վենետիկը պատրաստվում է 2008 թվականի գալուստը նշել Սան Մարկո կենտրոնական հրապարակում հազարավոր զույգերի համբույրով: Այս ակցիան ստացել է «Սեր 2008» անունը: Ակցիայի կազմակերպիչներից մեկը նշել է, որ միջոցառումը նպատակ ունի Վենետիկ վերադարձնել տոնի եւ զվարճանքների ոգին, իսկ համբույրը շատ հասարակ եւ միեւնույն ժամանակ հիանալի բան է:

Ըստ կազմակերպիչների՝ Ամանորի գիշերը հրապարակում հավաքվելու է մոտ 60 հազար մարդ: Նրանց կարծիքով՝ «Կուլեկտիվ համբույրը» դառնալու է խաղաղության եւ համընդհանուր սիրո խորհրդանիշ:

Քաղաքային իշխանություններն աջակցում են ակցիայի կազմակերպմանը:

Զգուշացի՛ր հարբած Սանտա Կլաուսից

Սանտա Կլաուսի զգեստ հագած մոտ 50 երիտասարդ ներխուժել է Նոր Զեւանդիայի Քրայսթերչ քաղաքի կինոթատրոն եւ իսկական ջարդ կազմակերպել այնտեղ: Դեպքը տեղի է ունեցել դեկտեմբերի 22-ին: Ըստ կինոթատրոնի տնօրենի՝ ոչ սթափ վիճակում գտնվող Սանտա Կլաուսները դեսուդեն էին վազում համալիրի սրահներում, վիրավորում այցելուներին, պոկում պաստառները եւ շրջում գովազդային վահանակները:

Ռստիկանների տվյալներով՝ անկարգությունները կազմակերպել են տեղի համալսարանի ուսանողները: Միջադեպը հատկապես վատ ազդեցություն է ունեցել կինոթատրոնում գտնվող երեխաների վրա:

Եղեւնու հետեւից՝ փրկարարների օգնությամբ

Լավ վերջաբանով ամանօրյա պատահար է տեղի ունեցել ԱՄՆ-ում: Հյուսիսային Կալիֆոռնիա նահանգի մի



բնակիչ եւ նրա երեք երեխաները գնացել էին անտառ՝ ամանօրյա եղեւնի հայթայթելու, սակայն մոլորվել էին եւ հայտնվել ուժեղ ճնաքի մեջ: Երեք օր Ֆրեդերիք Դոմինգեսը երեխաների հետ անցկացրել է անտառում՝ ձյան տեղումներից եւ սառնամանիքից թաքնվելով ջրահեռացման խողովակում: Միայն երրորդ օրը մոլորվածներին նկատել են փրկարարական ուղղաթիռից:

Արդեն հիվանդանոցում Ֆրեդերիքը պատմել է, որ շատ էր վախեցել, սակայն փորձում էր ամեն կերպ բաջալերել երեխաներին: Թաքստոց դարձած խողովակի մոտ Դոմինգեսի ընտանիքը ծառի ճյուղերից գրել էր «օգնեցե՛ք» բառը, որն էլ երեք օր անց նկատել էին ուղղաթիռից:

Ըստ բժիշկների՝ տուժածների կյանքին վտանգ չի սպառնում. նրանց հրաշքով հաջողվել է չսառեցնել վերջույթները:

Այժմ Դոմինգեսի ընտանիքը նախընտրում է արիեստական եղեւնիներ:

ՌՎ է ստանում Զմեռ պապիկի նամակները

Նոր տարվա նախօրեին համաշխարհային փոստային միությունը հետաքրքիր տվյալներ է հրապարակել: Անցյալ տարի Սանտա Կլաուսին, Զմեռ պապիկին եւ նրանց «գործընկերներին» ամբողջ աշխարհում հասցեագրվել է ավելի քան վեց միլիոն անամակ ու բացիկ: Եվ նման գրությունների թիվն անընդհատ աճում է:

Ուղարկողները հիմնականում երեխաներ են, որոնք «հասցե» տողում գրում են՝ Հյուսիսային բեւեռ, Սանտա Կլաուսին: Մի շարք երկրների փոստային ծառայություններն այդ նամակները հետ են ուղարկում՝ «հասցեատերն անհայտ է» նշումով: Սակայն շատ ծառայություններ այլ կերպ են վարվում:

Այսպես, օրինակ, Կանադայում եւ Ֆրանսիայում Զմեռ պապիկին ուղղված նամակներին պատասխանում են բացիկով: Հրաշք պապիկը երեխաներին «պատասխանում» է նաեւ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ֆինլանդիայում, Պորտուգալիայում, Բուլղարիայում եւ Ուկրաինայում: Որոշ փոստային ծառայու-



թյուններ բացիկին կցում են փոքրիկ հուշանվեր:

Ամանորն առանց ալկոհոլի

Իտալիայի կառավարության որոշմամբ Ամանորի գիշերը հասարակական վայրերում արգելվել է ալկոհոլային խմիչքների վաճառքը: Նոր որոշումը տարածվում է ռեստորանների, բարերի,




գիշերային ակումբների եւ զվարճանքի այլ վայրերի վրա:

Երկրի իշխանությունները նման կտրուկ միջոցների են դիմել անընդհատ աճող ճանապարհային պատահարների պատճառով: Ըստ վիճակագրության՝ վթարների մեծ մասը տեղի է ունենում վաղ առավոտյան, երբ հարբած երիտասարդները բուռն երեկոյներից վերադառնում են տուն:

Բացի այդ, նոր օրենքով բարձրացվել են ոչ սթափ վիճակում ավտոմեքենա վարելու համար նախատեսված տուգանքները: Այժմ հարբած վարորդը կարող է տուգանվել 500-ից 2000 եվրո:

Ֆախրա Թյունիբարյան



Հրդեհներ
Անցած շաբաթ հանրապետությունում գրանցվել է հրդեհի բռնկման 34 դեպք:

Այրվել է ավստրեմա

Դեկտեմբերի 20-ին Երևանի Ռուբինյան փողոցի 11 շենքին հարակից տարածքում բռնկված հրդեհի հետևանքով ամբողջությամբ այրվել է «ԳԱԶԵԼ» մակնիշի 2811 S պետհամարանիշով ավտոմեքենան:

Ննջասենյակը



Դեկտեմբերի 20-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երևանի Շիրակի փողոցի 4-րդ նրբանցքի 7 շենքի 2-րդ բնակարանում: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

Այրվել են 4. Ներսիսյանին պատկանող բնակարանի ննջասենյակն իր գույքով, երեք դուռ եւ երկու պատուհան:

Տանիքները

Դեկտեմբերի 25-ին Արարատի մարզի Նորաշեն գյուղում բռնկված հրդեհի հետևանքով այրվել է 9. Ավետյանի տան՝ 150 քմ մակերեսով տանիքը:

Նույն օրը Վանաձորի Վարդանանց փողոցի 2ա հասցեում այրվել է բետոնե սալիկների արտադրամասի՝ 24 քմ մակերեսով տանիքը:

Տարադամի փոխանակման կեսը

Դեկտեմբերի 21-ին հրդեհ է բռնկվել Արմավրի Յանրապետության փողոցի 4 շենքին հարակից տարածքում: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Այրվել են կանգառի ընդհանուր տանիքի ծածկահարթակի տակ կառուցված տարադամի փոխանակման՝ 30 քմ մակերեսով կետը եւ կից գտնվող ծաղկի խանութի տանիքը:

Տրանսֆորմատորը

Դեկտեմբերի 24-ին Երևանի Ա. Ավետիսյան փողոցի 78 շենքին հարակից տարածքում բռնկված հրդեհի հետևանքով այրվել է թիվ 1183 ենթակայանի տրանսֆորմատորը:

Պահեսավորած խոս, անասնակեր

Դեկտեմբերի 21-ին հրդեհ է բռնկվել Ալավերդիի Սանահին թաղամասում: Վերանյանին պատկանող տանը հարակից տարածքում այրվել է 2,5 տոննա խոտ:

Դեկտեմբերի 22-ին Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղում բռնկված հր-

դեհի հետևանքով Ս. Գրիգորյանին պատկանող տան բակում այրվել է պահեստավորած 500 հակ խոտ:

Դեկտեմբերի 24-ին Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղում բռնկված հրդեհից այրվել են 4. Օզմանյանի խոհանոցի տանիքը, խորդանոցն ամբողջությամբ եւ պահեստավորած աթարը:

Դեկտեմբերի 24-ին հրդեհ է բռնկվել Լոռու մարզի Հազվի գյուղում:

Այրվել է Բ. Իսոյանին պատկանող տան բակում պահեստավորած 2 տոննա խոտը:

Դեկտեմբերի 25-ին Գյումրիի Երեւանյան խճուղու 20 հողամասում բռնկված հրդեհի հետևանքով այրվել է կուտակված 5 տոննա ծղոտը:

Դեկտեմբերի 26-ին Արմավիրի մարզի Աղավնատում գյուղում բռնկված հրդեհի հետևանքով այրվել է Ն. Թադևոսյանի տան բակում պահեստավորած 200 հակ խոտը:

Այդ օրն Արթիկի Չարենցի փողոցի 16 տան բակում այրվել է ամբարած 500 հակ անասնակերը:

ԼՂԿ ՓԾ լրատվական կենտրոն

Տունն ամբողջությամբ

Դեկտեմբերի 23-ին, ժամը 22.20-ի սահմաններում, ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Ասկերանի շրջանի Չանախի գյուղի բնակելի տներից մեկում: Դեպքի վայր է մեկնել 1 մարտական հաշվարկ:

Հրդեհը մարվել է ժամը 01.50-ին: Տունն ամբողջությամբ այրվել է:

Խանութը՝ եւս



Դեկտեմբերի 26-ին հրդեհ է բռնկվել Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղի խանութներից մեկում:

Հրդեհի հետևանքով խանութն ամբողջությամբ այրվել է:

Ավտոդատար

Դեկտեմբերի 26-ին, ժամը 11.54-ի սահմաններում, ահազանգ է ստացվել, որ Ասկերանի շրջանի Շոշ գյուղի մոտակայքում «Նիվա» մակնիշի 11 LS 404 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթուղուց եւ ընկել ձորակը:

Դեպքի վայր է մեկնել փրկարար ծառայության օպերատիվ խումբը եւ ցուցաբերել անհրաժեշտ օգնություն:

Տուժածներ չկան:

Նահրա եղիազարյան

ՍԵՅՍՄԻԿ ՊՂՇՏՊՂՆՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 20-27-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չեն գրանցել:

Տարածաշրջանում, 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է չորս երկրաշարժ: Դեկտեմբերի 20-ին եւ 27-ին Թուրքիայում 7 բալ ուժգնությամբ երկու երկրաշարժ է տեղի ունեցել մայրաքաղաք Անկարայից, համապատասխանաբար՝ 61 կմ եւ 50 կմ հարավ-արեւելք: Երկրաշարժերի հետևանքով զոհեր եւ վիրավորներ չկան: Միայն 20-ին տեղի ունեցած ստորգետնյա ցնցումից թեթևակի վնասվել է մի քանի շենք: Դեկտեմբերի 25-ին, դարձյալ Թուրքիայում, Վան քաղաքից 59 կմ հարավ-արեւմուտք, գրանցվել է երկրաշարժ, որի ուժգնությունը էպիկենտրոնային գոտում կազմել է 4-5 բալ: Հաջորդ օրը Վրաստան-Ռուսաստան սահմանային գոտում, վրացական Կազբեգի քաղաքից 11 կմ հարավ-արեւմուտք, տեղի է ունեցել 4

բալ ուժգնությամբ երկրաշարժ:

Տարածաշրջանից դուրս, տեղի է ունեցել 6 եւ ավելի մագնիտուդով երեք ուժեղ երկրաշարժ, որոնք գրանցվել են Խաղաղ օվկիանոսում: Դեկտեմբերի 20-ին Նոր Զելանդիայի Գիսբորն քաղաքից 40 կմ հարավ-արեւմուտք տեղի է ունեցել 6,6 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ, որի հետևանքով վիրավորվել է 16 մարդ եւ թեթևակի վնասվել է մի քանի շենք: Հաջորդ օրն Ալյասկայում, Ալեուտյան կղզիների Ադակ կղզուց 75 կմ հարավ-արեւմուտք, գրանցվել է 6,1 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Հիշեցնենք, որ վերջին երեք օրվա ընթացքում Ալյասկայում տեղի է ունենում երկրորդ ուժեղ երկրաշարժը: Դեկտեմբերի 22-ին ինդոնեզական Պապուա նահանգի հյուսիս-արեւելյան ափամերձ հատվածում գրանցվել է 6,1 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ, որը ցունամի չի առաջացրել:

ՍՊԱԾ գործակալություն

.. 1-03 .. Երեւան

Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 2501 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 243 մարդ: Եղել է մանկական 149 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 34 երեխա:

Գրանցվել են 76 մահ եւ 10 դժբախտ պատահար:

Դեկտեմբերի 21

Տիգրան Մեծի պողոտայում տեղի ունեցած վթարից տուժել է աջ կողի սալջարդով «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել 22-ամյա Գ. Թեւանյանը:

Դեղորայքային թունավորումով «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել 29-ամյա Գ. Խառատյանը: Նույն հիվանդանոց է հոսպիտալացվել նաեւ շնոլ գազից թունավորված 40-ամյա Շ. Աղոնցը:

Դեկտեմբերի 22

Սեբաստիայի փողոցում տեղի ունեցած վթարից գլխուղեղի վնասվածք ստացած 50-ամյա Գազիկը շոկային վիճակում տեղափոխվել է «Մալաթիա» բժշկական կենտրոն:

Երակների կտրվածքով «Նաիրի» բժշկական կենտրոն է տեղափոխվել 30-ամյա մի տղամարդ:

Դեկտեմբերի 23

Լեւոնգորայան փողոցում տեղի ունեցած վթարից գանգուղեղի վնաս-

վածքով եւ կտրվածքով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 70-ամյա Մ. Խալաթյանը:

Երակների կտրվածքով «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել 27-ամյա Ա. Գ.-ն:

Քիմիական թունավորումով «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել նաեւ 44-ամյա Մ. Նազարբեկյանը, իսկ պղպեղի պահածոյից թունավորումով բոտուլիզմ ախտանշանով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 30-ամյա Տ. Ամալյանը:

Դեկտեմբերի 25

Լեւոնգորայան փողոցի 38 հասցեում հրագեմային վնասվածքից մահացել է 40-ամյա Գ. Արախանյանը:

Արշակունյաց պողոտայի 67 հասցեում տեղի ունեցած վթարից տուժել է բազմակի վնասվածքներով «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել 27-ամյա Է. Կարապետյանը:

Դեկտեմբերի 26

«Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել Բելիսկու փողոցում վթարի ենթարկված եւ մարմնական վնասվածքներ ստացած 30-ամյա Գ. Դուկասյանը:

«Օմեգա» բարում դանակահարվել է մարմնական վնասվածքով «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել 30-ամյա Ա. Նազարյանը:

Հիդրոմետը ծառայությունն .. Եղանակի տեսություն ..

Դեկտեմբերի 18-19-ը հանրապետության առանձին շրջաններում, 20-ին Սյունիքում դիտվել են տեղումներ՝ 2-7 մմ (Ստեփանակերտում՝ 15 մմ): Ամսի 17-ին, 21-23-ը դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է. Սյունիքի հովիտներում՝ 8...11 °C, Տավուշում՝ 6...10 °C, Լոռիում՝ 3...8 °C, Արցախում եւ Արարատյան դաշտում՝ 4...7 °C, Սյունիքի մախալներում՝ 2...7 °C, լեռնային շրջաններում՝ 0...-4 °C: Օդի նվազագույն ջերմաստիճանը

գրանցվել է. լեռնային շրջաններում՝ -12...-17 °C (Աշոցքում՝ -28 °C), Սյունիքի մախալներում՝ -10...-16 °C, Լոռիում՝ -12...-14 °C, Արարատյան դաշտում՝ -6...-11 °C, Տավուշում՝ -4...-10 °C, Սյունիքի հովիտներում՝ -3...-8 °C, Արցախում՝ -3...-5 °C:

Առաջիկայում սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ: Քամին արեւելյան՝ 1-6 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը հունվարի 1-ի գիշերը կնվազի 2-3 աստիճանով:

Արտակարգ շնորհավորանք

ԹՆՑՄԻՆՆԵՐ 1-ԿՄ շճԹՍՍ

Տո՛ւ, ա՛յ Աստծո պատկեր (իմա՛ Մարդ), նայի՛ր քո ներսը: Էնքան ուժ, կարողություն, հնարավորություն, բարություն ու արարչագործություն որ դու ունես, մի քանի սերնդի կեռիքի: Բա ինչո՞ւ երջանիկ չես:

Հենց էս վայրկյանից վերցնում ես մի լավ, թափով մուրճ ու սեպ եւ քո բաժին երկնքի ամենաերեւացող տեղում փորագրում՝ մարդ երջանիկ է այնքան, որքան ինքն է որոշել: Քանի որ գործիս անունը իրազեկումն է, հիշեցնեմ՝ մարդն աշխարհ է գալիս այն ըմբռնելու համար. սեր, տուն, ծնող, ընտանիք, երեխա, հայրենիք, հաճույք, հրապուրանք, վայելք, ստեղծագործություն...

Ո՞նց ենք սիրում որոճալ մեր «անհաջողություն-դժբախտությունները», կենտրոնացած քչփորել մեր «անբուժելի վերքերը», ի՞նչ արագ ու սահուն ենք անցնում մեր ուրախության վրայով: Հենց մի պահ մեզ լավ զգանք, հիշողության սար ու ձորից տխուր խոհերի ցեխակոլոլ սելավ կհայցենք, հազար ու մի սպասվելիք այ-այ-այ իրադարձություններ կմոզոնենք, որ մեր դարդիման կերպարին զվարթ գույն չխառնվի:

Օրա-ամա-դարա-նորյա բարեմաղթանքս. աշխատում ենք մուրճով:

Մենք ծնվել ենք երջանիկ լինելու եւ արարելու համար: Փորագրենք մեր առաքելությունը: Մենք լուսավոր ժպիտով բա-

րի ու բարյացկամ, հավատավոր ու չուրացող մարդիկ ենք:

Զինացիների պես մենք մեր հոգում միշտ կանաչ ենք պահում կենաց ծառը, ու վստահ ենք, որ այնտեղ, ուզի թե չուզի՝ պիտի բուն դնի հազարան բլբուլը:

Մենք ցանկանում ենք առողջության ու երիտասարդության տաճար կառուցել, եւ առաջին հերթին չորացնում ենք այն ճահիճը, որտեղ խեղդվում են մեր լավագույն ցանկություններն ու մղումները:

Մենք առողջ ենք, մենք սիրում ու կոփում ենք մեր մարմինը, որովհետեւ առողջ մարմինը տաճար է հոգու համար, հիվանդը՝ զնդան:

Հին հնդիկներն ասում էին (ու նորերն էլ ոնց որ չեն առարկում)՝ եթե մարդիկ ավելի շատ մտածեին այն մասին, որ գիտելիքը փրկություն է, ամբողջ տառապանքի չնչին մասն էլ չէր լինի. մարդկային ամբողջ դժբախտությունը անգիտության կամ տգիտության հետեւանք է:

Մենք քաջ գիտենք, որ գիշերը որքան էլ երկար, տանջալից, մղձավանջային եւ նույնիսկ բեւեռային լինի՝ առավոտ է գալու:

Մենք նպատակասլաց, հետեւողական, սխալվել-սայթաքելուց չվախեցող, տաճար տանող ճամփա հարթող ենք:

Ինչքան էլ հաջողակ ու հաղթող լինենք՝ թե սար ենք բարձրացել, ձոր էլ պիտի իջնենք, իհար-



կե, հաղթողի վերքերը շուտ են լավանում: Մենք չենք ընկճվում ու հիասթափվում, որովհետեւ գիտակցում ենք կանգառների եւ ժամանակավոր անհաջողությունների անխուսափելիությունը: Այստեղ մուրճն ավելի հատու՝ «Անհաջողության վերջին աստիճանը հաջողության առաջին աստիճանն է»: Հատուկ այս առիթով Հենրի Ֆորդն ասել է՝ անհաջողությունը, վրիպումը, սայթաքումն անոթալի չեն, անոթալին սխալվելու, անհաջողության վախն է:

Իսկ մենք ուժեղ ենք ու կամային, եւ դաստիարակված է մեր հոգու կորովը, ուստի ժպտում ենք նույնիսկ ամենադժվար պահին, որովհետեւ՝ պարտվել ժպիտը դեմքին, նշանակում է հաջողության ճանապարհին պահպանել լավ տրամադրությունն ու առողջությունը:

Հասանք հաղթանակների գլխավոր բանալուն, որը մեր խնդրանքով հատուկ Ձեզ համար կռել-ծուլել է անձամբ Սուվորովը. այս կյանքում միայն նա կարող է հաղթել, ով կհաղթահարի վախը, ալարկոտությունն ու անվստահությունը:

Ամենավերջում՝ Արտակարգ ալիքի արդեն տասը տարեկան դարձած տեղեկատվական կոչ բարեմաղթանքը. չկա այնպիսի մի արտակարգ իրավիճակ, որից դուրս գալու ելքը չգտնվի: Եթե նույնիսկ պահն ամենադժվարինն է, անհուսալին կամ անելանելին՝ մի՛ վիատվեք...

**Հարգանքով՝
«Արտակարգ ալիք»**



Արտակարգ թանկ շնորհավորանք

2007 թվականի հոկտեմբերի 10-ը՝ «Ադետների նվազեցումն սկսվում է դպրոցից» կարգախոսի ներքո անցկացված Ադետների նվազեցման միջազգային օրը, գեղեցիկ հուշ դարձավ շատ երեխաների համար, հատկապես նրանց, ովքեր դարձան Շվեյցարիայի զարգացման գործակալության «Արձագանք» ծրագրի շրջանակներում, Գեղարքունիքի, Տավուշի եւ Վայոց ձորի մարզերի դպրոցներում հայտարարված շարադրության եւ նկարչության մրցույթների հաղթողներ:

Եվ ահա, հաղթող երեխաներից մեկը շնորհավորական բացիկ է ուղարկել միջոցառման հեղինակ՝ «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոն, որին սիրով հաղորդակից ենք դարձնում մեր ընթերցողներին:

Շնորհավոր ձեր նոր տարին եւ Աուրբ Շուկոլը:

Այս տարին ինձ համար բոլորովին այլ է: Ճարեմուտի օրացույցն ու երաժշտական տեսամազնիտոֆոնը (DVD) իմ նոր տարին դարձրին անմոռաց եւ երջանիկ:

Թող այս տարին ասավաճային լույս շնորհի նրանց, ովքեր կիսեցին իմ երջանկությունը:

Միրով՝ ձեր թղթակից՝
Մարիամ Եսայան
Տավուշի մարզ, գյուղ Փինչին





.. Օգտակար խորհուրդներ ..

Ամանոր, Սուրբ Ծնունդ

Հայ ժողովրդի մեջ ընդունված է Ամանորը կոչել նաև Կաղանդ: Այն նշանակում է որեւէ տոն նշելու կոչ, հրավեր: Հետագայում Կաղանդը ստացել է տարեմուտի իմաստ:

Քրիստոնեական առումով Ամանորը հաշվետվության յուրօրինակ մի օր է յուրաքանչյուր մարդու համար, օր, երբ ամփոփվում են տարվա ընթացքում կատարված գործերը:


Սուրբ Ծնունդն աշխարհի քրիստոնյաների ամենամեծ և սիրված տոներից է: Իր թե նշանակությամբ ու ելույթով, թե խորհրդով Ամանորը զիջում է Ս. Ծննդյանը: Ամանորն ինքնին օրացուցային փոփոխման երեւոյթ է, և իր մեջ որեւէ խորհուրդ չունի: Իսկ Սուրբ Ծնունդն ամբողջությամբ խորին խորհուրդ է Աստուծո Որդու Ծնունդը, որը մարդկության համար դառնում է նոր և անվերջանալի սկիզբ: Իզուր չէ, որ շուրջ 2000 տարի մարդկությունն իր տոմարական բոլոր հաշարկները կապում է Քրիստոսի Ծննդի հետ նախքան Քրիստոս և Քրիստոսի Ծննդից հետո:

Սուրբ Ծննդյանը նախորդում է պահք, որը սկսվում է դեկտեմբերի 30-ին և ավարտվում հունվարի 5-ի երեկոյան ճրագալույցի Սուրբ Պատարագով: Այս շրջանում կենդանական սնունդ ուտելը բացառվում է:

Սուրբ Ծնունդ

Ինչու՞ են քրիստոնեական եկեղեցիները Հիսուս Քրիստոսի ծննդյան օրը տարբեր օրերի նշում:

Հայ Առաքելական Ս. Եկեղեցին Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան տոնը նշում է հուն-



վարի 6-ին: Կաթոլիկ եկեղեցին այդ տոնը նշում է դեկտեմբերի 25-ին: Մինչև 4-րդ դարը բոլոր քրիստոնյաները Ս. Ծնունդը նշել են հունվարի 6-ին: Սակայն անգամ քրիստոնեության ընդունումից հետո հռոմեացիները շարունակում էին հեթանոսական տոները նշել: Բանն այն է, որ դեկտեմբերի 25-ին մեծ շուքով նշվում էր արեւի պաշտամունքին նվիրված տոնը: Հեթանոսական ավանդույթները խափանելու համար 336 թ. Հռոմի եկեղեցին դեկտեմբերի 25-ը պաշտոնապես հռչակեց Հիսուս Քրիստոսի ծննդյան օր: Հետագայում Ասորիքում և գրեթե ողջ արեւելքում Քրիստոսի Ծննդյան տոնի օրը փոխադրվեց դեկ-

տեմբերի 25-ին, իսկ հունվարի 6-ը մնաց որպես Տիրոջ Աստվածայտնության, Սկրտության օր: Հնագույն ավանդության և ավետարանական հաշվարկներին հավատարիմ է մնացել միայն Հայ Առաքելական Ս. Եկեղեցին՝ հունվարի 6-ին միասնաբար նշելով Քրիստոսի Ծննդյան և Աստվածայտնության տոները:

Ինչու՞ է պահոց շրջանը համընկնում Նոր տարվա ընթացքին:

Ըստ Հայ եկեղեցու, Ս. Ծննդյանը նախորդող մեկ շաբաթը պահոց շրջան է: Դեկտեմբերի 30-ից մինչև հունվարի 5-ի երեկո մարդիկ պահք են պահում: Այդ ընթացքում օգտագործվում է բացառապես բուսական ծագում ունեցող սնունդ: Հայոց իին տոմարի համաձայն՝ Նոր տարին նշվում էր Նախասարդի 1-ին, այսինքն՝ օգոստոսի 11-ին, որը չէր համընկնում պահքին: Հետագայում տոմարական նոր հաշվարկի ներմուծմամբ, Նոր տարին սկսեցին տոնել դեկտեմբերի 31-ին, որը համընկնում էր քրիստոնեական մեծագույն տոնի՝ Ս. Ծննդյան նախընթաց պահքին: Պահեցողները պահող շրջանից դուրս են գալիս հունվարի 5-ի երեկոյան, երբ եկեղեցում մատուցվում է Ս. Ծննդյան ճրագալույցի Ս. Պատարագ և տրվում է Ս. Ծննդյան ավետիսը: Մարդիկ միմյանց ողջունում են «Քրիստոս Ծնվեց և Հայտնվեց, Օրինյալ է Հայտնությունը Քրիստոսի»:

Ի՞նչ է ճրագալույցի Ս. Պատարագը:


Հատկանշական է, որ Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան տոնը սկսվում է հունվարի 5-ի երեկոյան, քանի որ եկեղեցական օրը փոխվում է երեկոյան ժամերգությունից հետո ժամը 17.00-ից: Սուրբ Ծնունդն սկսում ենք տոնել հունվարի 5-ի երեկոյան և հունվարի

6-ին: Հունվարի 5-ի երեկոյան բոլոր եկեղեցիներում մատուցվում է ճրագալույցի Ս. Պատարագ: Հետաքրքիր է, որ ճրագալույցի Ս. Պատարագ տարին ընդամենը երկու անգամ է մատուցվում Ս. Ծննդյան և Ս. Հարության տոներին: ճրագալույց նշանակում է ճրագ (մոմ) լուցանել, այսինքն՝ վառել: Այդ օրը երեկոյան մարդիկ եկեղեցում վառված ճրագներն իրենց հետ տուն են տանում: Այն խորհրդանշում է աստվածային լույս, եկեղեցու օրհնություն: ճրագալույցը խորհրդանշում է բեթղեհեմյան աստղի լույսը, որն առաջնորդեց մոգերին դեպի Մանուկ Հիսուսը:

Ս. Ծննդյան այլ արարողություններ:

Հունվարի 6-ին Ս. Ծննդյան Ս. Պատարագից հետո, կատարվում է Ջրօրհնեք, որը խորհրդանշում է Հորդանան գետում Քրիստոսի մկրտությունը: Խաչով և Սրբալույս Սյուռնով օրհնված հրաշագործ ջուրը բաժանվում է ժողովրդին ի բժշկություն հոգեւոր և մարմնավոր ախտերի: Ս. Ծննդյան տոնակատարությունների շարքում կատարվում է նաև Տնօրհնեքի արարողություն: Ս. Ծննդյան և Ս. Հարության տոներից հետո մարդիկ հոգեւորականին իրենց տուն և աշխատավայր են հրավիրում տոնի կենարար ավետիսը և աստվածային օրհնությունը ստանալու նպատակով: Տնօրհնեք կատարվում է նաև այն ժամանակ, երբ տանը խախտվում է խաղաղությունը կամ զգացվում է դիվային ուժերի ներկայությունը: Հունվարի 7-ը, ինչպես և բոլոր տաղավար (մեծ, գլխավոր) տոներին հաջորդող օրերը, հանգուցյալների հիշատակության օր է Մեռելոց:

Ս. Ծննդյան տոնի հանդիսություններն ավարտվում են հունվարի 13-ին Տիրոջ Անվանակոչությամբ:



Ուղիղ 150 տարի առաջ՝ 1857 թ. սեպտեմբերի 16-ին Բոստոնում արտոնագիր է տրվում «One-horse Open Sleigh» վերնագրով երգի համար (բառացի անգլերենից թարգմանած՝ սա նշանակում է մեկ ձիով բաց սահնակ): Սա հայտնի «Jingle Bells» երգի բառերից մի հատված է: Այս երգն Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների նախօրեին երգում է գրեթե ողջ աշխարհը: Դեկտեմբերի սկզբից սկսած այն ինչու է համարյա բոլոր ռադիոկայանների, հեռուստատվիթների թերթից, փողոցներում, խանութներում, կրպակներում և ամանօրյա բացիկների էջերում: Բացի այդ, «Jingle Bells»-ը նաև առաջին երգն է, որը ինչել է տիեզերքում: 1965 թ. դեկտեմբերի 16-ին տիեզերագնացներ Թոմ Սթեֆորդը և Ուոլի Շիրան տիեզերքից մի հաշվետվություն են ուղարկում Երկիր. «Մենք արբանյակի նման մի օբյեկտ ենք տեսնում: Նա բեռնային ուղեծրով հյուսիսից հարավ է շարժվում: Տեսնում ենք գլխավոր մոդուլը և նրա առջեւից ընթացող ութ ավելի փոքրեր: Գլխավոր մոդուլի օդաչուն կարմիր հագուս-

տով է...»: Դրանից հետո տիեզերագնացները հանում են գաղտնի կերպով տիեզերանավ բերած շրթհարմունն ու գանգակները և միասին կատարում «Jingle Bells» երգը: Տոնական կատակը հաջողվեց...

Սակայն ո՞վ է սիրված երգի հեղինակը: Թարգմանության ժամանակ, դեռևս անհայտ հանգամանքներում հեղինակի անունը Ջեյմսի փոխարեն դառնում է Ջեյն: Մինչև իմա էլ համաշխարհային ցանցի տարբեր կայքերից կարելի տեղեկանալ, որ երգը գրել է ոմն Ջեյն Փիրփոնթ, և որ այն ստեղծվել է կիրակնօրյա դպրոցում կազմակերպված ցերեկույթին ներկայացնելու համար: Առաջին հայացքից սա կարող է բավական տարօրինակ թվալ, քանի որ Միացյալ Նահանգներում նույնիսկ չեղած տեղից իրենց համար հերոսներ են ստեղծում, ուրեմն՝ ինչպես կարող էր պատահել, որ այսքան սիրված ու տարածված երգի մասին ոչինչ հայտնի չէ: Ինչպես հետագայում պարզվում է, իրականում ոչ մի Ջեյն Փիրփոնթ էլ գոյություն չունեք, իսկ այ Ջեյմս Փիրփոնթի մասին կան որոշ տեղեկություններ:

Նա ծնվել է 1822 թ. Մասաչուսեթս նահանգի Մեդֆորդ քաղաքում՝ եկեղեցուց անջատված կրոնական ճյուղերից մեկին դավանող քահանայի ընտանիքում: Ջեյմսը բավական վաղ է ամուսնացել և արդեն երեսուն տարեկանում 12 (որոշ տվյալներով 7) երեխայի հայր էր: Նրա կինը էլիզա Փուրսը, Սավանայի քաղաքագլխի դուստրն էր, չափազանց կիրթ ու բազմակողմանի զարգացած անձնավորություն: Ընտանիքում շատ մեծ տեղ էին հատկացնում երեխաների դաստիարակությանը: Ընդհանուր առմամբ դա շատ երաժշտական ընտանիք էր, և Ջեյմսը վարուց էր երգեր գրում: Ճիշտ է՝ նրանց հայրենի Մեդֆորդ քաղաքն այնքան փոքր էր, որ այն տեղ միայն մեկ դաշնամուր կար, այն էլ՝ տիկին Ուոթերմանի հյուրանոցում: Ահա, թե ինչպես է դա պատահում...

Պաշտոնապես արտոնագիր ստանալուց վեց տարի առաջ՝ 1851 թ. դեկտեմբե-

Թող կրկին ղողակջեն գակերը



ին Ջեյմսը հյուրանոցի տիրուհու համար մի գվարձալի երգ է նվագում, որը պատմում է այն մասին, թե ինչ արկածներ են սպասվում սահնակով զբոսանքի ելած երիտասարդին ու աղջկան: Տիկին Ուոթերմանը լռելյայն ու համբերատար լսում է մինչև վերջ, իսկ հետո քթի տակ փնթփնթում. «Ինչ էլ հավել ունեք, պարոն Փիրփոնթ: Համ էլ ավելի լավ կլինեք, որ երգը կոչեիք ոչ թե սահնակի անունով, այլ գանգակների Jingle Bells»: Հենց այս անվամբ էլ երգը սկսում է իր հաղթարշավն ամբողջ աշխարհում:

Մի քանի տարի անց մտերիմները խորհուրդ են տալիս Ջեյմսին արտոնագրել երգը, որպեսզի «կարողանա նաև դրանով գումար աշխատել»: Այդ ժամանակ արդեն Ջեյմսն իր ընտանիքով տեղափոխվել էր կնոջ հարազատ Սավանա քաղաք: Այդ պատճառով երգի հեղինակային իրավունքի փաստաթղթերը ձեւակերպվում են Բոս-

տոնում: Ջեյմսը փոխել էր բնակության վայրը, որովհետև հոգու խորքում նա արկածային մարդ էր ու սիրում էր փոփոխություններ: Նույն արագությամբ նա փոխում էր նաև աշխատանքը՝ լուսանկարիչ, եկեղեցու երգեհոնահար և երաժշտական տնօրեն: Նա նաև երգի ու երգեհոն նվագելու դասեր էր տալիս և երգեր գրում: Ավաղ, սա նրա զբաղմունքների ամբողջական ցուցակը չէ: Ջեյմսը չափազանց բուռն կյանքով էր ապրում, և արդարացի լինելու համար պետք է խոստովանել, որ այնքան էլ անթերի կենսագրություն չունեք: Այստեղից էլ գալիս է երգի բառերի մի փոքր ազատ բնույթը, ինչն էլ իր հերթին կասկած է առաջացնում, որ այն գրվել է կիրակնօրյա դպրոցի համար: Այն ժամանակ Միացյալ Նահանգներում բարոյականության հետ կապված հարցերին բավական խիստ էին մոտենում:

Երգն ավելի հանրահայտ է դառնում, երբ դրա 100-ամյա հոբելյանի կապակցությամբ Ֆրենկ Սինատրան այն ընդգրկում է իր երգացանկի մեջ:

Ջեյմս Փիրփոնթը մահանում է 1893 թ., իսկ նրա գրած երգը մինչ օրս կա, ու համոզված ենք, որ շարունակելու է ապրել և տարեմուտին ուրախացնել մեծերին ու փոքրերին:

